

ԳՐԱԴԻՏՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԴՊՐՈՅՆԵՐՈՒՄ

Նորերս Թիֆլիսի Ս. Սարգսի ուսումնարանի հայերէնի ուսուցիչը գրել կարգալու օրինակելը դաս տուեց հրապարակաւ Յովնանեան ուսումնարանի դահլիճում: Ի պատիւ Ս. Սարգսի ուսումնարանի պէտք է աւելացնել, որ այս երկրորդ անգամն է, ինչ որ նրանում պաշտօն վարողները փորձերի գեղեցիկ օրինակով ասպարէզ են դալիս քաղաքի միւս ուսուցիչներին և վարժուհիներին խրախուսելու և նրանց բարի նախանձը շարժելու համար, որպէս զի մեր մէջ մտքերի փոխանակութեան հիմքերը հաստատուին: Միայն այսպիսի միջոցներով մենք կարող ենք իմանալ, թէ մեր ուսումնարաններում ինչ յառաջադիմութիւններ ենք տնում, ապա թէ ոչ իւրաքանչիւրը իւր ընդ մէջ նստած՝ լայն հորիզոնների տեսարաններից զուրկ է մնում:

Ես ամիսսում եմ, որ այն դասի ներկայ դասուել չկորոզացայ: Լրագրերից յայտնի էր, որ դատախօս պէտք է լինէր մեր լաւագոյն ուսուցիչներից մէկը—պ. Ալիխանեանը, և թէ նա պէտք է տար «Ծ» գրի դաս—այսինքն հնչական մեթոդի մի դաս: Դարձեալ լրագիրներից իմացանք, որ աւանդած դատը ուղղութիւն պահառ տրդիւնը է ունեցել, աշակերտները ցրուած են եղել, աշխուժով չեն հետեւել դասին, իսկ դասից յետոյ ունկնդիրների վիճարանութիւնները ոչ մի հաստատեղրահայութեան չեն յանգել:—

Ինչո՞ւ այսպէս պիտի լինէր: Աւսուցիչը փորձուած մարդ էր, աշակերտներն արդէն հինգ տմիս աշակերտութիւն էին արել (դասը յունվարին էր), մեթոդն էլ մեր ուսուցիչների սիրած «հնչական» մեթոդն էր: Լրագրութիւնը փորձեց միայն մի հանգամանքի բացատրութիւնը տալ, միայն աշակերտների ցրուածութեան պատճառը քննեց: Նրա ասելով, աշակերտները դասին մտադրութեամբ չէին հետեւում, որովհետեւ նստած էին օտար դահլիճում և շրջապատուած էին օտար մարդկանցով: Բայց այս բացատրութիւնը յաջող չպէտք է համարուի այն պարզ պատճառով, որ Տ ամիս առաջ մի և նոյն Ս. Սարգսի աշակերտները մի և նոյն Յովնանեան ուսումնարանի դահլիճում, բազմաթիւ օտար ունկնդիրների ներկայութեամբ՝ ամենեւին չկորցրին իրանց հետաքրքրութիւնը և հարցասիրութիւնը, երբ որ իրանց տալիս էր ուսուերէնի դաս մի վարժուհի: Հայերէնի ուսուցիչը ոչ նուազ հմուտ էր և օժտուած էր կառա-

վարելու շնորհով, քան ռուսերէնի վարժուհին, ուրեմն պատ-
ճառը ուրիշ տեղ և աւելի խորը պէտք է վնասուել: Ես չեմ
վարանում պնդել, որ անկարգութեան բուն պատճառը «հըն-
չական» մեթոդն է եղել, և պիտի լինէր:

«Հնչական մեթոդ» . . . 0, ես լաւ եմ յիշում այն կեն-
դանի ոգևորութիւնը, որ Ռուսաստանում մանկավարժների
մէջ տիրեց, երբ որ թնդուեց «հնչական մեթոդ» բառը: Քա-
ռասուն տարի առաջ մենք էլ, Պետերբուրգի ուսանողներս,
ոչ նուազ նախանձախաղիւ եղանք, որ այդ նորահնչակ մե-
թոդը փոխադրուի նաև մեր ուսումնարանները: Ընկերներս
ինձ պարտաւարեցրին, որ ես յանձն առնեմ այդ դորժի իրա-
կանացումը, և առաջին անգամ հրատարակեցինք հայերէն խո-
շոր շարժական տառերը—հնչական մեթոդի բացատրու-
թեամբ:

Եւ յիշուի անհիմն բան չէր այդչափ ընդհանուր ոգևո-
րութիւնը: Մինչև այդ ժամանակ մեր Տէր-Թոդիկեան ուսում-
նարաններում իշխում էր ոգեւոպան այբ-ժէ-ճէ-աւան: Մա-
նուկը ժամերով, օրերով, ամիսներով ու տարիներով ուսում-
նարանի յարկի տակ պէտք է շարունակ զօղանջէր ձայներ ա-
ռանց իմաստի, վանկեր ու տառեր առանց կապակցութեան,
դրերի անուններ փոխանակ համապատասխան հնչմանց, միով բա-
նիւ՝ միշտ աղաղակ, միշտ աղմուկ, միշտ ժխոր, մինչև որ
գլուխը տռտրուէր, միտքը սառչէր, ապուշութիւն տիրէր:
Հասկանալի է, թէ ինչ վիճակի մէջ պէտք է լինէր մանուկի
ողին, երբ որ նա անգագար պէտք է թնդացնէր այսպիսի ճի-
ւադականներ՝ եչ-դադ-բեն-այբ-յիւրէ—«եղբայր», հո-այբ-ցո—
«հաց», պէ-այբ-նու ինիւրէ—«պանիր» և այլն: Բայց աւելի
դարձուրելին այն էր, որ նա սկզբներում և ոչ իսկ բառեր
պիտի կաղմէր, այլ լոկ անկապ վանկեր՝ բեն-այբ—բա, գիմ-
ինի—գի, դա-վո-յիւն—դու և այլն:

Սակայն ահա եկաւ «հնչական» մեթոդը, երբ որ գրի
անուաններ ի փոխարէն լսուեցին ճիշդ հնչիւններ, երբ որ
փոխանակ այբ-չա-քէ ասելու, արտասանուեց ա-չը-քը—
«աչք»: Սա մի լոյս էր ուսումնարանի միջնորդութեամբ, հան-
գատութիւն էր պատրաստուած ուղեղի համար: Ուրեմն այն
ընդհանրական ոգևորութեան համար լաւ պատճառ կար: Մար-
դիկ շունչ բաշեցին, տանջուած մանուկները սկսեցին աւելի
շուտ ջոկել վանկ, բառ, նախադասութիւն, հասկանալ գրի
զօրութիւնը:

Կատկած չկայ, որ հնչական մեթոդը զգալի յառաջադի-
մութիւն էր այբ-ժէ-ճէ-աւայի համեմատութեամբ, սակայն դա-

սերի շարունակութեանց ժամանակ հետզհետէ շօշափելի էր դառնում նոր մեթոդի կիսատութիւնը, պակասաւորութիւնը: Գործնականութիւնը տեսականութեան չափ հրապուելիչ չգարձաւ: Ուստի և այն հնչական մեթոդը այսօր իւր շատ մասերով մեզ յիշեցնում է նոյն հին այբփէճէճւան: Մենք տեսնում ենք, որ հնչական մեթոդը դարձեալ նոյն տաղտկութիւնն և դանդաղութիւնն է տարածում դասարանի միջնորդութեամբ, ուր նոյն իսկ Ալիսանեանները խոչ ու խորթերին են հանդիպում և ցաւին դարման չեն կարողանում անել, մինչև որ չգգառտանան և մէկ կողմ չշարժեն այդ դովաժ հնչական մեթոդը, ինչպէս որ այբփէճէճւան իբրև թէ արդէն շարժուել ենք: Նա տակաւին կենդանի է, այն հին կուռքը, այն անգոսնած հին այբփէճէճւան:

Առաին ասում է, թէ մի փոքր մտիկ մուռտարում է ամբողջ կարասը: Այնպէս էլ երկու փոքր (երեւցած) հանգամանքներ իրպառ փշայնում են հնչական մեթոդի արդիւնքները: Նախ այն աննշան կարծած «ը» ձայնը, որ ձգձգուելով և բազմապատկուելով՝ ամբողջ դասին մանուկի տկանջին չաբուչի պէս տալիս է ու տալիս է: Եւ ահա դասարանում ուղիւնուղես անդադար լսում է բըբը-բը-բը, գըբը-գը-գը, դըբը-գը-դը և այլ այսպիսի անմարդկային վայրենական ձայներ: Բազաձայնը իւր ընութեամբ այնպէս կազմուած չէ, որ ջոկ և անջատ լսուի. և ուրեմն հնչական մեթոդի հիմնական սխալը հէնց այն է, որ ուզում է անընականը ընական դարձնել «բըբը» կիսաձայներով: Անընական է առել, իբրև թէ ա-ը-բը կը դառնայ «աչք», ուր-ու-բը կը դառնայ «սուր», գը-բը-ի-ը-կը դառնայ «գրիչ» և այլն, այլ նրանք պարզապէս կը դառնան «աչքբը», «սըբըբը» «գըբըբը», որ անհետիւցնում է: Միայն մի ճանապարհ կայ ուղիղ և ընականօրէն հեզելու համար, այսպէս՝ ա-աչ-աչք, ու-սու-սուր, ի-րի-գը-գը-բը-ի-ը, որով ձայնաւորը օրգանական հիմք է դառնում վանկի մէջ:

Մենք չպէտք է մոռանանք մարդու ընութիւնը: Նա իւր ատուածային զարգացմամբ գործ է ածում յօդաբաշխ լեզու, և ոչ թէ անիմատ ձայնարկութիւններ: Ապա ուրեմն մանուկն էլ պէտք է ոտանայ նախադասութիւններ, պարբերութիւններ, կապակցած ասութիւններ, միաբ ըովանդակող լեզու, և ոչ թէ ծը-ծը-ծը, անվերջ կրկնութիւններ դասի սկզբից մինչև վերջը: Երեւակայեան հնչական մեթոդի սուսուցչի դասը. Այսօր մենք կը սովորենք «ծը» գիրը. ծըբը-ա-սըբը—«ծառ», է-ծըբը—«էծ», ծըբը-իծըբը—«ծիծ», ծըբը-ու-իսըբը—«ծուխ», մըբը-է-ծըբը—«մեծ», բըբը-իծըբը—«բիծ», գըբը-

ի-ծրըր—«գիծ», լըրը-ու-ծըրը—«լուծ», կըրը-ու-ըրը-ծըրը-ըրը-«կուրծը» և այլն և այլն. միթէ այս բոլորը նոյն այբժէճէճապի դժոխային տանջանքները չէն...

Հիմի գանք երկրորդ անպատեհութեան. Այժմ՝ երևակայենք հնչական մեթոտով երկար բառերի ընթերցանութիւնը—ա-ն-ը-ր-ը-ի-չ-ը-ր-ը-ը-ը-ա-ն-ը-ր-ը-ա-կ-ը-ր-ը-ա-ն-ը-ր-ը-ու-թ-ը-ր-ը-ի-ն-ը-ր-ը... դուք կարծու՞մ էք մանուկը հէնց անսայթաք այս բոլորը ուղիղ կը կապէ և կտտէ «անիշխանականութիւն»։ Այ երբէք. նա ընդհակառակն բառը ամեն տեսակ կը ծռէ և կը ծռամէ—«անիշխակութիւն», «աշնախակութիւն» և այլն։ Այո անտեղի լեզուագաբանութիւնը սէր պիտի տանէ. խեղճ ուսուցիչը կը ստիպուի ուղղել, բայց աշակերտը դարձեալ կը թոցնի մի հին-չիւն, կուլ կը տայ մի ուրիշը, կը հնարի մի նորը, ամբողջը դարձեալ կաղձատի և կաղաւաղի. ուսուցիչը ամեն ջանք դորձ կը դնի ներշնչել, աշակերտը միշտ հեշտութեամբ չի ներշնչուի, որով կը ստեղծուի մի անտանելի ոգորումն, մի անվերջ սպեմարտութիւն։ Այս դէպքում ի՞նչ կարող են անել նոյն իսկ փորձուած Ալիթոմնեաները. ոչինչ, պէտք է դէն շարունակ ան-յուսալի մեթոդը, ուրիշ ճար չկայ։

Ես յիշեցի միայն երկու անպատեհութիւններ, որպէս զի ընթերցողը յանկարծակիի չգայ շարքների բաղմութիւնից։ Բայց իսկութեամբ կան ուրիշ անպատեհութիւններ ևս, դուք աւելի ծանրադոյնե՞րը։ Հնչական մեթոդը իւր ընտելութեամբ երկար ժամանակ զբաղու՞մ է լոկ միայն վանկերով կամ անկապ նախադասութիւններով։ Մինչդեռ աշխոյժ մանուկը, եթէ նա հոգով առողջ մարդ է, պահանջու՞մ է կենդանի լեզու, ուրեմն—հէքիւթ, մանրապատում, մանրավէպ, ամբողջութիւն, միտք ու խորհուրդ յայտնող լեզու, ընտիր հատուած։ Մեր այժմեան այբբենաբանները թէպէտ սկսել են տեղ տեղ այդպիսի մանր հատուածներ խառնել իրանց երկար առող կըց-կառուր վանկերի և անյարիր բառերի ու նախադասութիւնների շարքերում, սակայն դարձեալ կիսատ ճանապարհի վերայ են կանգ առնում. ինչպէս ասացի նրանք տեղ տեղ միայն օտղիտներ են բաց անում, իսկ ընդհանրապէս դարձեալ լայն սփռում են իրանց անապատը, միշտ սովորեցնելով կամ «ծը» գիր, կամ «կը» գիր վայրենի «ըրը» կիսաձայներով, անկապ նորմալ բառերով (բառատիպարներով), աւելի ևս անկապ նախադասութիւններով, միշտ թմբած պահելով մանուկի միտքն ու ուշիմութիւնը։

Խեղճ հայ ուսուցիչը... նա սեպտեմբերին ի՞նչ մեծամեծ յոյսերով է սկսում ուսուցումը «հնչական» մեթոդին ա-

պաւլիններով, բայց անցնում են ամիսներ և նա հետզհետէ սկսում է յուսահատուել—իւր անհնալած արդիւնքը չի աւելում: Ապա լոյս են գալիս նոր նոր այբբենարաններ, նոր նոր պատկերներով, ապագրութեան խայտաբղէտ բաղադրութիւններով: ուսուցիչը այդ բոլորը փորձում է, սակայն յունկարին դարձեալ չի երևում արդիւնքը: Ահա Ալիսանեանն էլ փորձում է դործ դնել ամենանորագոյն ընթերցարանը—«Իտսընկերը» . . . բայց դարձեալ ապարդիւն: Այդ բոլոր ընթերցարանները իրանց բուն ընթերցանութեան առաջին գրքով ի հարկէ ասորբեր բաներ են և զանազան արժէք ունին, բայց իրանց այբբենարանով ամէնքն էլ նոյնն են, ամէնքն էլ ձգտում են հնչական մեթոդով զրադիտութիւն ուսուցանել: Աղայեան, Լիսիցեան (և ընկ.), Ռաշմաճեան և միւսները միշտ «հնչական» մեթոդ են ներկայացնում ըստ էութեան: Զիմի լսենք այդ մեթոդով աւանդուող զրադիտութեան խեղճութեան նկարագիրը մի վարժուհու խօսքերով, որի նամակը երեք տարի առաջ տպուեց «Մշակ» մէջ, մասնաւորապէս Աղայեանի գրքի առթով: Այնտեղ ասուած է.

«Նա ա խնդրում եմ . . . ծանօթացրէք մեզ ձեր գրագիտական մեթոդի հետ, որով . . . ազատած կլինէք մեզ Աղայեանի անհամ և ձանձրալի «արտ»—«տատ»-ից իր հնչական մեթոդի հետ ի միասին»:

«Պարզ է, որ նրա հնչական մեթոդը չի յաջողուած. տանջւում է և դատատուն, տանջւում, զղւում և ձանձրանում են երեխայքը: Ամիսներ է անցնում, ջղեր քայքայւում, սր հաղիւ յաջողւում է նրանց կարգալ գրել սովորեցնել: Նիժէ դուք մի նոր հոսանք մտցնէք մանկավարժութեան մէջ, հրաշալի բան կը լինիք արած»:

Արդ, լինջով պիտի երեւայ այնպէս փափագած «նոր հոսանքը մանկավարժութեան մէջ»: Անշուշտ մի այնպիսի մեթոդով, որ կարողանար իսպառ դուրս մղել զրադիտութեան ուսումից այբժէճէճաւջի հետքերը, որ կէս ճանապարհի վերայ սառած չմնար, այլ բոլորովին վերացնէր բռնելու, ծիծիւալու, ճոճուալու, մոնչելու և ունալու անապատի ձայները, գլուխ տուաբեցնող աւելորդ «բրբ» կահագութիւնները, որ մի վստահելի հնար տար երկար բառերը անսխալ գրել կարգալու համար, և որ դարգահ մերկ բառերի ու մերկ նախադասութիւնների փոխարէն, ուղղակի մատակարարէր կենդանի լեզու լրացած ընտիր հասուածներով, հէնց սկզբից մինչև գործի վախճանը: Իսկ այսպիսի մեթոդ ես արդէն տառնեալ տարիներ առաջ

հրատարակել էի «օրգանական մեթոդ» անունով: Մնում էր որ նոյնը աւելի գործնական ձեռնարկի ձևով նորից հանդէս հանէի, որ և հատարեցի «Նոր Այրբենարան» անունով (ուսուցիչներին և աշակերտներին համար ջոկ ջոկ): Մեթոդի մանրամասն նկարագրութիւնը շատ պէտք է հեշտացնի ամենայն բարեխիղճ և յառաջադիմութիւն սիրող ուսուցչի գործը: Թէպէտ Այրբենարանը պատկերներով չէ դարգարած, բայց իւր էփանդնով մատչելի պէտք է լինի նոյն իսկ ամենաաղքատ ուսումնարաններին համար:

Ի՞նչ է այս «Նոր Այրբենարանը»: Ըստ երևութին կարծես թէ «Դասընկերի» պէս մի բան է: Այս «դասընկերը» իբրև նորութիւններ (?) հռչակեց 3 հանգամանք—ձեռագրով կարգաւ սովորեցնելը, ուղղահայեաց գրութիւնը, մէկ տողով գրութիւնը: Այդ բոլոր բաները կան նաև «Նոր Այրբենարանի» մէջ, թէպէտ ոչ իբրև նորութիւններ անուանած, որովհետև ուղղահայեաց գրութիւնը արդէն քարոզել է բժ. Փաշայեան խանը, իսկ մէկ տողով գրութիւնը վայելչագրութեան մէջ մըրացրել է արդէն Գ. Լևոնեանը: Մնում է առաջին հանգամանքը—ձեռագրով կարգաւ սովորեցնելը, որ խիստ կարևոր հանգամանք է, և որ ես արդէն 30 տարի իրագործում եմ, բայց բոլորովին տարբեր կերպով, քան «Դասընկերը»:

«Ձեռագրով կարգաւ սովորեցնել» խօսքը—երկդիմի խօսք է: Եթէ ձեռագիրը աչքի առջև պիտի դրուի, որ աշակերտը այն կարգայ և արտագրի, ինչպէս որ «Դասընկերն» է անում, այն կը լինի «կարգաւ-գրել» կամ Ֆրանսիական ձև. իսկ եթէ մանուկը պէտք է գրէ իւր ձեռքով իւր մտքի յղացումները, ինչպէս որ իմ «Նոր Այրբենարանը» է տրամադրում, այն կը լինի գերմանական ձև կամ «գրել-կարգաւ»: Բայց թէ ի՞նչ տարբերութիւն կայ կարգաւ-գրելու և գրել կարգաւում մէջ, որով աշակերտը վարժում է կամ կրաւորական ստրկութեան կամ գործնական ինքնուրոյնութեան, այս բանի կարևոր բացատրութիւնը պէտք է կարգաւ «Նոր Այրբենարանին» յաւելուածի մէջ: Եթէ այս ասածները ուղիղ են, ուրիմ տխրահռչակ «հնչական» մեթոդը մեր մէջ քիչ քիչ վարժեցնում է ստրկական թմրութեան, օրգանականը՝ ինքնուրոյն գործունէութեան: Այս էլ սրա էական առաւելութիւններից մէկն է:

Մնում է մի գլխաւոր առաւելութիւնն էլ յիշատակել, որ «օրգանական մեթոդը» աշխատում է սիստեմատիքաբար գործ դնել, կատարեալ յաջողութիւն ստանալու համար: Այդ է վարժութիւնների կանոնաւոր յաջորդութիւնը:


Վարժութիւններն կարգն այս է—բանաւոր, գրաւոր, ընթերցանութեան վարժութիւն: Հնչական» մեթոդը զբաղում է առաւելապէս միայն կարգաւ-գրելով, այսինքն լեզուի արուեստական մասերով: «օրգանական» գլխաւոր գործ է համարում ընական լեզուն, այսինքն բանաւոր վարժութիւնը: Ապա այս աղբիւրից բխեցնում է նաեւ արուեստական պիտոյքները: Եւ յիշաւի, մանուկը բանաւորի մէջ լաւ վարժաւելուց յետոյ՝ կարիք է զգում գրով արտայայտել իւր մտքերը, և ահա նա գրում է իւր յղացածները: Այսպէս ինքը իւր ձեռքով կազմելով իւր այբբենարանը՝ նա յետոյ այդ կարգում է, որով ընթերցանութեան առաջին և ամուր հիմք է հաստատում: «Հնչական» մեթոդը մի այսպիսի կարգ և յաջորդութիւն գրութաւարութեամբ կարող է պահպանել հէնց այն պատճառով, որ մեր սովորական այբբենարանները շատ տարօրինակ ձևով են կազմուած: Նայեցէք թէ նրանք ինչ խայտաբղէտ տեսարան են ներկայացնում ամէն մի երեսում: այդ տեղ նախ բարձ ու պատիւ է ստանում մի խոշոր «ծ» կամ «կ» կամ մի այլ տառ, այն ևս ձեռագիր և տպագրած օրինակներով, ապա վերևից, աջից, ձախից զարդարած՝ կը տեսնէք պատկերներ, վանկեր, բառատիպարներ, նախադասութիւններ, երբեմն մի փոքրիկ զուարճալի հատուած ևս: Ասուցիչը ոչ մի հրահանգ չունի, թէ այդպէս ցրուեցնող բազմազանութիւնը ինչ կերպով կենդրոնացնէ մանուկների առաջ. և ահա նա, իւր խելքին զօռաւորով, աջ ու ձախ խարխալում է, դէսից դէնից կարգացնել է տալիս, այս կամ այն հարցումներ է առաջարկում, մին կամ միւս մասը արտագրել է տալիս . . . և այս բոլորը նա կատարում է անսխտեմ կերպով, կէս հաստատել տալով, ինքը քրանքի մէջ է լողանում, աշակերանները յօրանջում են և էլ չեն հետաքրքրւում խայտաբղետութիւններով:

Այս բոլոր գործունէութեան մէջ ուսուցիչը այն միակ ծրագրով է առաջնորդւում, թէ պէտք է առհասարակ գրել տայ, և ուրիշ ոչինչ: Օրգանական մեթոտը առհասարակ հերիք չի համարում, այլ նա խօսելու, գրելու, կարդալու վարժութիւնների մէջ միշտ հետամուտ է, թէ արդեօք դրանից իւրաքանչիւրը ի՞նչ մասնաւոր վարժութիւններից, ի՞նչ մասնոր հմտութիւններից է բաղկացած, որպէս զի կարողանայ գլխաւոր վարժութիւնը անթերի և լիութեամբ ձեռացնել: Իմ «Նոր սկզբունքների» մէջ բանաւորի համար թուած է 12 հմտութիւն, գրաւորի համար՝ 7 հմտութիւն, ընթերցանութեան համար՝ 4 հմտութիւն: Այսպէս ուսուցիչը ամեն կողմից զգաստացած է, որ իրօք գործ կատարել, ոչ թէ մթու-

Թեան մէջ խարխափի և պատահականութիւնների դերի դառնայ:

Հիմն մի երկու խօսք մեր ուսուցիչներին և վարժուհիներին: Այլ ևս կատկած չկայ, որ ձեր ջերմեռանդ աշխատութիւնը դրէ՝ թէ անօրում է կորչում. այլ ևս կատկած չկայ, որ ձեր սանիկները իրանց պատկերազարդ այբբենարանների վերայ քիչ քիչ քուն են մտնում, զրկվելով իրանց նախկին աշխուժութիւնից և արթուն ուշիմութիւնից: Այդպէս տանջուած մանուկները ընտելանում են մտաց դանդաղութեան և այդ ցաւով տառապում են ոչ միայն ուսման առաջի տարին, այլ նրանք նոյն իսկ հետեւալ տարիների համար անպէտք են հանդիսանում, որովհետեւ ընդհանրաբար զրկվում են ուսանելու ընդունակութիւնից: Թող ձեմարանի և ներսիսեան դպրոցի ուսուցիչները վկայեն, թէ իրանց դ. դասարանի համար ի՞նչպիսի աշակերտներ են հասուցանում ծխական ուսումնարանները: Այս բանի ճաբը պէտք է դրանել, և այն ժամանակ մենք կունենանք «մանկավարժութեան նոր հոսանք»: Գործը ձեր գործակցութեամբ պէտք է կատարուի:

Սեդրաք Մանդինեան



ՇԻՐՎԱՆՋԱԴԷԻ ՎԷՊԵՐԻ ՆԻԻԹԸ

I

Կան հեղինակներ, որոնց դէմ հէնց առաջին օրերից ծառանում է հասարակութեան և նոյն իսկ զրական մարդկանց արհամարհանքը, հեղինակներ, որոնց բաժինը լինում է երկարատև անուշադրութիւնը և յաճախ էլ ծաղրող սուլոցը: Առաջին օրերից սրանք ստիպուած են լինում զենուկելու հերոսական համբերութեամբ ու անգուլ աշխատասիրութեամբ. լուռ գործում են ու աւելի բարձր երկերի արտադրութեամբ արժանապէս ծառայում ընտրած ասպարէզին: Թէև ներկան նրանց թշնամին է հանդիսանում, բայց ապագայ տարիները լինում են նրանց դաշնակիցը: Գալիք սերունդը տեսնում է նրանց կատարածը և ակնածութեամբ մատնանիչ է լինում այն տեղին, որին արժանի էին Այսպիսիների արեգարդ զլուխը և կնճռոտ ճակատը կիանքի վերջալոյսին դարգարում է լինում սարդենու ճիւղերով:

Գրողների այս տեսակին է պատկանում և Շիրվանդադէն: Քսանհինգամեայ զրական դործունէութեան ընթացքում մեծ մասամբ չատ ցած դնահատութիւն է լսել իւր մասին խօսողներից: